Վահան Տերյան

Մեղմիվ փռվեց քնքուշ մութ

Մեղմիվ փռվեց քնքուշ մութ
Խորհրդավոր, թափանցիկ,
Երեկոնե՛ր իմ կապույտ,
Երազնե՛ր իմ փութանցիկ...

Ժանյակները լուսազարդ
Լայն երկնքի ծովերում
Հյուսվածներով անավարտ
Մոռացումս են օրորում...

Ժըպիտներով խաղացկուն
Երգն է ձուլվել իմ կյանքին,
Սեր ու երգ է իմ հոգում,
Սիրո երգ է իմ հոգին...

Իմ սիրո պես խորն ու մեծ
Շուրջըս աշխարհն է ծփում.
Ոսկի հեքիա՛թ, ո՞վ պատմեց
Քեզ կախարդված իմ հոգուն...

Մեղմիվ փռվեց քնքուշ մութ,
Խորհրդավոր, թափանցիկ,
Երեկոնե՛ր իմ կապույտ,

Երազնե՛ր իմ փութանցիկ...